

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԿԱՐԻՈՒ

Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Երկու րիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տոյար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՁՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

"Iravounk"

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

"Иравункъ"

ВАРНА (България)

Գրութիւնք եւ

չեմ տրուիր

Ծրանշարի տողը
20 ամսեայով

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Ռուսիոյ և Ռուստրո-Հունգարիոյ զինուորային զորքերը Սուլթանին ներկայացուցին Մակեդոնիոյ նկատմամբ այն ծանուցագիրը՝ որուն վրայ երկու դաշինքներուն միջև համաձայնութիւն մը գոյացած էր։ Կը կարծուի թէ Ֆրանսա, Անգլիա, Իտալիա և Գերմանիա այդ դիմումին ոյժ պիտի տան։

Երկու պետութեանց պահանջած բարեկարգութիւնները ծայրայեղ բանք չեն։ Խնդիրը ընդհանուր կառավարչի մը ընտրութեան (Գոսովայի, Սէլանիքի ու Սոնաթիքի վիլայէթներուն համար), ոստիկանութեան վերակազմութեան, տասնորդի հաւաքման ձեւին, քանի մը անկարելի միջոցներու (ինչպէս Օսմ. Պանդաին մասնաճիւղեր հաստատելը) կը վերաբերի։ Բացայայտ է թէ այս ծրագիրը ամենէն աւելի դիւրագգաժութեան հակամէտ եղողներն ալ խրաչեցնելու բան մը չունի։ Ոչ միայն Սուլթանի վեհապետութեան ֆրանս չը բերեր, այլ և նոյն Ապտիլ Համիտին զանազան ատեններ նոյնինքն Մակեդոնիոյ նկատմամբ նախկին յանձնառութեանց վրայ յայտնի նահանջի ե. զական հանգամանքը կը ներկայացնէ։

Այս առաջին անգամը չէ, Պէրլինի Դաշնագրութենէն ի վեր, որ Արեւմտեան զինանագիտութիւնը Մակեդոնիայով զբաղել կստիպուի։ 1880ին այս նահանգին վիճակը անհանգուրժելի կը թուէր։

Ընդհանուր անպահովութենէ, Ալպանացիներու հարստահարութիւններէն, աւազակներու ասպատակութիւններէն, պաշտօնեաներու և ոստիկաններու սխառնման թիւ կողպտումներէն, ցեղի և կրօնքի կռիւներէն զատ, Սան-Սթեֆանոյի դաշնագրով Մակեդոնիոյ մէջ խառնակութեան և դժգոհութեան նոր խմոր մը նետուած էր։

Այս նախագիծը որ ստորագրուեցաւ Մեծ Թուրքէն, դանակը կողորդին վրայ, երբ Աղէք-

սանտր Բ. Դրան թղթագէտներուն մէջ, Թանզիմաթի, 1856ի խաթիւր Հիւժայունին և Միտհատ բաշայի սահմանադրութեանը հետ։ Միտհատային մի քիչ տարօրինակ և անտրամաբանական կը թուի որ պետութիւնները՝ փոխանակ կանխաւ պայմանաւորուած յանձնառութիւններուն գործադրութեանը վրայ պնդելու, իրենց զանցառութիւնը լուրջեմ կը դատապարտեն ու կը համակերպին այսօր իրենց պահանջները նուազեցնել քան երէկուան իրենց ստացած իրաւունքները, և չեն զգար ոչնչութիւնը առաջարկուած նոր յանձնառութեանց, բաղդատմամբ նախկին աւելի մեծ յանձնառութիւններուն՝ որոնք չեն յարգուած և զեղեալ կը նկատուին։

Մարդ կը փափաքի գիտնալ թէ ինչ հրաշքով պահանջուած նոր խոստումները գործնական արժէք մը պիտի ստանան, երբ հիններուն գործադրութեանը հոգը տարուի։ Խորհրդածելով մարդ կը մղուի մտածել թէ ոչ մի բան չը պիտի կրնայ Ապտիլ Համիտը իր խոստումադրութեանը իրենց մէջ կասեցնել, որչափ իր այդ ձգձգող բանակցութեանց շնորհիւ ձեռք ձգած նպատակներ արդիւնքին պաշտօնական յայտնութիւնը։

Սուլթանը Հայաստանի նպատակներով միաձայն պահանջմանցը գոհացում տալ մինչ յամառաբար կը մերժէր, ու ահա Եւրոպան կը լքէ—կը հաւատնէր թէ առժամապէս—Հայաստանի դատը, ու այսպէսով Սուլթանին սխառնման յետաձգութիւնները կը նուիրագործէ։ Սուլթանը իր լուրջեմը ձեռք քաշեց Մակեդոնիան բարեկարգելու համար իր յանձնառութիւններէն։ ու հիմա ալ Եւրոպան անոր իօսը կընէ խոստացուած բարենորոգմանց մէջ չնչին մասին համար միայն։ Այս քաղաքականութիւնը իրաւամբ անհանգստութիւն կը պատճառէ ամէն անհատի, որուն համար փորձառութիւնը մեղաւոր տառ մը չէ։ 1876ին, ազդուութեան թերին՝ զինանագիտութեան

մը կողմէ որ թէեւ ճիշդ կը տեսնէր, բայց ոչ պէտք եղածին չափ բարձր կը խօսէր, ոչ ալ ուժով, պատճառ եղաւ Սերպիոյ, յետոյ ալ Ռուս-թուրք պատերազմին ծագելուն։ 1896ին, Եւրոպական համաձայնութեան անդամաւորութիւնը բովանդակ ժողովորդի մը կոտորածը կազմակերպողները անպատիժ թողոց ու Յունաստանի և Թուրքիոյ միջև տեղի ունեցող անհաւասար մենամարտը արտօնեց։

Մէկ ու միւս պարագային մէջ, միմիայն մարդկութիւնը չէր որ կամքի ու վճռականութեան այս չգոյութեան առջև ֆրաստեցաւ։ նոյն ինքն խաղաղութիւնը չափազանց երկար տալս դիւանագիտութեան սխալներուն ֆրանս բաշեց։ Այժմ եթէ կուզեն առաջը առնել Պալքանեան թերակղզիին մէջ սկսուելու վրայ եղող ընդհանուր խառնակութեան մը, որ պիտի չը յապաղիր բովանդակ արեւելքի ու աշխարհի վրայ ալ տարածուի, աղէկ կերեւայ թէ ընելու երկու բան կայ. առաջին պէտք կայ լուրջ կատարեալ ծրագրի մը, որ ունենայ վարչական բարենորոգումներ, որոնք գոնէ հաւասարին մէկ կողմէ Մակեդոնիոյ համար 1882ի պայմանագրութեան ու 1896ի հրամանագրութեանց, և միւս կողմէ Հայաստանի հաւար 1895ի յիշատակագրին։ Երկրորդ. հարկ է հաստատամտութեամբ այս բարենորոգմանց գործադրութիւնը հետապնդել—անգամ մը որ անոնք թուղթի վրայ կը կատարուին—հիմնելով 1888ին Արեւելեան Ռուսիայի համար եղած հակակշռի Յանձնաժողովոյն նման հակակշռի ուրիշ Յանձնաժողով մը։

Երէկ Պուլկարիոյ ազատութեան տարեգարձը ըլլալուն պատճառաւ, մեր չորեքշաբթի օրուան թիւը այսօր մամուլի յանձնել ստիպուեցանք։

Երէկ Պուլկարիոյ ազատութեան տարեգարձը ըլլալուն պատճառաւ, մեր չորեքշաբթի օրուան թիւը այսօր մամուլի յանձնել ստիպուեցանք։

Երէկ Պուլկարիոյ ազատութեան տարեգարձը ըլլալուն պատճառաւ, մեր չորեքշաբթի օրուան թիւը այսօր մամուլի յանձնել ստիպուեցանք։

Երէկ Պուլկարիոյ ազատութեան տարեգարձը ըլլալուն պատճառաւ, մեր չորեքշաբթի օրուան թիւը այսօր մամուլի յանձնել ստիպուեցանք։

ՖՈՒԱՏ ՓԱՇԱՅԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՏԱԿԸ (*)

(1869ին հիդինակին մեռնելէն
օր մը առաջ Ապոլի Ազիզին ուղ
ղումը):

Վեհափառ Տէր .

Միայն քանի մը օրեր , թերեւս
միայն քանի մը ժամեր ունի՜մ ապրե-
լու , եւ ես կը բաղձամ այս վերջին
վայրկեանները սրբազան պարտակա-
նութեան մը լուսմին նուիրել : Կը
փափաքեմ վերջին խորհրդածութիւն-
ներս — վշտալից խորհրդածութիւն-
ներ — երկարատեւ եւ զժրագոյց ասպա-
րէզի մը դառն պտուղը , ձեր առջեւ
դնել : Երբ ձեր վեհափառութիւնը այս
տողերը ստանայ , ես այլեւս այս աշ-
խարհէն պիտի չըլլամ : Երեւոյ , հե-
տեւաբար , զիս լսել առանց կասկածի ,
որովհետեւ զերեզմանէն խօսող ձայնը
միշտ անկեղծ է :

Աստուած ձեզ օժտած է պաշտօնով
մը , որ որքան պանծալի , նոյնքան ալ
վտանգաւոր է : Այս պաշտօնը արժա-
նաւորապէս կատարելու համար ձեր
վեհափառութիւնը պէտք է բոլորէ
մեծ եւ դառն ճշմարտութիւն մը : Օս-
մանեան կայսրութիւնը վտանգի մէջ
է : Մեր զորացիներու ձեռք բերած
սրնթաց յառաջդիմութիւնը եւ մեր
նախահարց գործած անբոլորնիւնի սխալ-
ները այսօր մեզ կը դնեն չափազանց

(*) «Այս յիշատակարանը թարգ-
մանուած է վաւերական պատճէնէ մը
եւ կը լուսարանէ այն եղանակը , ո-
րով Թուրքիոյ արդի բարեկրթական
կուսակիցները ցարդ կը գիտեն իրենց
երկրին գործերը կըսուի թէ Թուրքիա
զլիւսաւորապէս ասոր հեղինակին կը
պարտի — որը շատ ասորիներու համար
փոփոխակի Մեծ-Եգիպտոսի եւ արաւ-
քին գործող նախարարի պաշտօն վո-
րած էր — 1856ի հռչակաւոր «Մաթը-
Հիւմեռու» որով Թուրք իշխանու-
թեան բոլոր ցեղերուն եւ զաւանճե-
րներուն համահաւասար քաղաքական ի-
րաւունք կը հրատարակուէր» :

տագնապալի կոտորածներ մը մէջ :
Չարհուրդի աղէտ մը հեռացնելու հա-
մար , ձեր վեհափառութիւնը պիտի
ստիպուի անցեալէն անջատուելով մեզ
զէպի նոր կեանք մը առաջնորդելու :

Վանի մը տղէտ հայրենասէրներ կը
ջանան ձեզ համոզել թէ մեր հին մի-
ջոցներովը պիտի կարենայինք մեր
անցեալ մեծ թիւերը վերահաստատել :
Աններելի պատրանք : Անտարակոյս ,
եթէ մեր զորացիները այժմ գտնուէին
այն կացութեան մէջ ուր էին մեր նա-
խահայրերու օրերուն , մեր նախկին
միջոցները բաւական պիտի ըլլային
ձեր վեհափառութիւնը եւրոպայի ի-
րաւաբարը բնելու : Բայց աւագ , մեր
զրացիները իրենց երկու դարեր ա-
ռաջ կողմէն շատ հեռու կը գտնուին :
Անոնք բոլորը յառաջդիմողներ , մեզ ետ
թողելով , ճշմարիտ է մենք ալ քիչ
ու շատ յառաջացանք :

Ձեր ներկայ կոտորածութիւնը ձեր
նախորդներու կոտորածութիւնէն շատ
աւելի լուսաւորուած է եւ աւելի մի-
ջոցներ ունի իր տրամադրութեան
տակ : Դժբաղդաբար , սակայն , այս
բազմաթիւ բարգաւաճ վիճակը ժա-
մանակի պէտքերուն բաւական ըլլալէ
շատ հեռու է :

Ներկային ձեր եւրոպայի մէջ ունե-
ցած զիրքը անվիճար պահելու համար ,
զուր օչ միայն պէտք է հաւասարիք
կամ նոյնիսկ վերագանցէք ձեր նա-
խորդները , այլ պէտք է հաւասարիք
եւ ասպարէզ կարգաք ձեր արդի դրա-
ցիներուն : Դադարաբար աւելի յստակ
բացատրելու համար , ես կը պնդեմ թէ
ձեր կայսրութիւնը մահուան պատու-
հասի տակ ստիպուած է ունենալ կնգ-
դիւն չափ դրամ , Ֆրանսայի չափ հան-
ձար եւ Ռուսիոյ չափ զինուոր :

Մեզ համար խնդիրը այլեւս արագ
յառաջդիմելու մէջ չի կայանար , այլ
պարզապէս յառաջդիմելու : Այնքան
որքան եւրոպայի միւս ազգերը : Ձեր
հոյակապ կայսրութիւնը ձեզ ամէն
տարրական պէտքերով ճոխացուցած է
զերազանցելու համար համար եւրո-
պական պիտութիւններէ որ եւ է մին
եւ բոլորը :

ՖՈՒԱՏ

(Շարունակելի)

ՆՈՐ ՇԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՄԵ

Յունուար 24ին , երեկոյեան , գան-
ձակեցի հարուստ Արաճաճ Սահակ
եանի տան դուռը ծեծուած է մի զիմակ
հագած մարդ : Երբ տան աղախինը
դուռը բաց է անուժ , այդ անյայտ
անձը յայտնուած է , որ նամակ ունի
տալու Պ . Սահակեանին , այն էլ ան-
ձամբ , եւ ներս է մտնում տուն : Ներ-
կայանալով Պ . Սահակեանին , անձա-
նօթը տալիս է նրան նամակը եւ պա-
հանջում է կարգալիւր մօտ : Նամակի
մէջ պահանջուած է Պ . Սահակեանից ե-
րեք հազար բուրդի ի նպաստ իբր թէ
արտասահմանեան հայ յեղափոխական-
ների : Նոյնը պահանջում է բերանացի
անձանօթը : Պ . Սահակեանը պատա-
խանում է , որ այդ թուղթին պատ-
րաստ փող չունի եւ առաջարկում է
առաւօտեան գալ եւ փողը ստանալ :
Անձանօթը հեռանում է եւ առաւօտ-
եան նշանակած ժամին (6—7) գալիս
է Սահակեանի տունը փողերը ստա-
նալու , բայց իսկ անգամ զիմակով չի
լինում : Նա յոր հետ ունենում է մի
ընկեր : Երկուսն էլ տեղի ու տեղը
ձերբակալուում են եւ յանձնուում ոս-
տիկանութեան : Վերջինս յաղդուում է
ձերբակալել եւ մի երրորդ անձնաւո-
րութեան : Այդ չարագործներից մէկը
սկզբում յալտնում է , թէ ինքը տա-
ճիկ է եւ ցոյց է տալիս իւր անցա-
գիրը Դուրսու Արդու լայն-Օղու ա-
նունով , բայց յետոյ խոստովանում է ,
որ տաճիկահայտաւոր հայ է Սեդրակ Յա-
րութիւնեան ազգանունով եւ թէ իւր
անցագիրը ձեռք է բերել Բաթումում
10 բուրդով մի թուրքից : Ետոյ կեկ
է Գանձակ եւ իջեալնի տեղացի Մէջ-
լում Ջահարեանի մօտ : Երկրորդն ի-
րեն անուանում է Միշա , բայց ազգա-
նունը զեռ եւս պարզուած չէ : Սա
յայտնել է , որ ընդամենը երեք օր է
ինչ կեկ է Գանձակ , այն ինչ ոստի-
կանական քննութիւնը պարզում է ,
որ նա մօտ մէկ ամիս է , ինչ որ
Գանձակում է գտնուում : Ձերբակալ-
ուած երրորդ անձնաւորութիւնը գան-
ձակեցի Մէջլում Ջահարեանն է , որը ,

ինչպէս ասում են , ոչ մի հաստատ
գործ չունի , այլ միայն սիրում է լաւ
հագնուել , եւ ասում են , որ զիմակ
ծածկած անձանօթն սա ինքն է : Երբ
որ երկու ձերբակալուածներին Պ . Սա-
հակեանի տանից տանում էին ոստի-
կանատուն , ես տեսայ այդ գեաղանե-
րին : Զլանցից մէկը հագնուած էր
տրապիզոնցի յոյն տարագրով եւ երեսի
գծազրուծութեւնը ամենեւին հայի նման
չէր եւ նա շատ նման էր տաճիկ կամ
յոյնի : Պա տաճիկ կամ յոյն պէտք էր
լինէր : արդ նա չի կարողանում հայե-
րէն լաւ խօսել :

Պատմում են որ վերջերս անասու-
րագիր նամակներ է ստացել նահան-
գական դատարանի անդամ Պ . Շահպա-
րոնեանց , որոց պահանջել են 300
բուրդի , հակառակ դէպքում սպառ-
նացել են վախցնել նրա դատարան :
Նոյնպիսի անատորագիր նամակներ
ստացել են նաեւ ուսու փաստաբաններ
Մասեւիչ եւ Օկոգորով , նոյնպէս եւ
Տիկին Յուրալով , որին գրում են , որ
եթէ նա փող չունենայ , թող իւր հա-
րուստ փեսայ Լիօնօղովից ստանայ եւ
տալ : Մի խօսքով այդ անբարտաւան
եւ անխիղճ գեաղաները փող կորզե-
լու նպատակով ոչ մի միջոց չեն խնա-
յում : Կեղտոտում եւ վայր են գցում
օտարների առաջ ամբողջ ազգի պա-
տիւր :

(Նոր-Դար)

Գանձակ

ԻՐԱՒՈՒՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Մեր գործակալներէն կը խնդրուի
որ հաճին մեզ շատով տեղիկացնել ի-
րենց նոր գտնածութիւնը , որպէս զի չը
վճարողներու հետ պարուիք մեր ծա-
նուցմանը համաձայն :

Տ . Պ . Յակոբեան (Մեքսիկոյ)
Ձեր թիւթը ետ կկա : մինչեւ զուր
խնդրած էիք շարունակել եւ խոստա-
ցած էիք Յակոբ Պողոսեանի հաշիւն
ալ մաքրել :

Ա . ԵՐՏԱՆՆԱՆ

(56)

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

ՄԱՍՆ ԵՐՐ ԻՂ

ՅԵՂԱՓՈԽԱՆԱԸ ԻՐ ԳԵՐԻՆ ՄԵՋ . . .

— Թո՛ղ ատրկա . . . ինչպէ՞ս եղաւ վէրքը , ընդ-
միջեց մանկամարդ աղջիկը՝ զրկիէ անբացատրելի
գորովմանով մը :

— Բան մը չըկայ . . . անոր ցաւն անգամ չիմ
զգար , մինչեւ Պատրիկ ճնշուած ճիւղ մը բնկելով
ինքնիւր վրայ : Արեւնը զապրած է . . . շատ հան-
գիստ եմ :

— Ո՛հ , մի՛ գուցէ գնալիք . . .

Ու Լալիզար չկրցաւ խօսքը շարունակել . . . կար-
ծես թէ այդ քառամեկի հայրու մը մանգոտ երկաթի
մը պէս իր սրտին մէջ միտնեցաւ :

— Ձե՛ք որ «մի՛ կասկածեք» ըսի , առաւելից Պատ-
րիկ՝ մանկամարդ աղջկան ձեռքը բռնելով : Մի՞թէ՞
քուրտին գնալիք դիւրին կերպով կրնայ ծակել մեր
սիրտը . . . Անհոգ եղի՛ր . . . Պատրիկ մէկ երկու
փոշակով չմեռնիր : Կիտիլը որ շատ անգամներ
կուրծքին մէջ մտած են անոնք . . . Կաթիլ մը
աղբւնը . . . ուրիշ ոչինչ :

Լալիզար խորին հառաջանք մը հանեց ու մթու-
թեան մէջ իր քովը նստող երիտասարդին երեսը նա-
յել ուղից : Յետոյ ցաւաբեկ ձայնով մը հարցուց .
— Սակից մինչեւ քաղաքը շատ ճամբայ ունինո՞ք :

— Ձե՛ք . . . Երբ առտուան լոյսը չձեղքուած մեկ-
նելու ըլլանք , կէս օրուան մօտ քաղաքը կը հաս-
նինք , պատասխանեց Պատրիկ՝ որուն կոկորդը խղ-
զող չոր հաղը հետզհետէ կը սաստկանար :

— Ե՛ս , ե՛ս եղայ պատճառը . . . բացառաւոր լա-
լիզար՝ վայրկեան մը լուրջ ու իր հոգեւոյն անդուստ
ցաւը խղիւղեւ ջանալէ ետք :

— Կուղեւ վշտացնե՛լ զիս , Լալիզար , ընդհատեց
Պատրիկ խղճուելու մօտ շեշտով մը :

— Ո՛հ , Աստուած չընէ . . .

— Ուրեմն , ի՞նչու համար այդ խօսքը կրկնեցի՞ր :
Մանկամարդ աղջիկը լուրջ : Բայց չկրնայիք իր
գտնութիւնը զգալ , սկսաւ արցունքներ թափել ,
որոնք իր արտմալի ու աղուոր այտերուն վրայէն
յորդիլով թրչեցին Պատրիկի ձեռքերը . . .

Պատրիկ զողաց . . . ու մորմնապէ ձայնով մը ը-
սաւ .

— Կուղա՛ս դուն . Լալիզար :

— Ո՛հ , ներէ ինձի . . . սիրտս բլած է , Պատրիկ՝
թոթովեց մանկամարդ աղջիկը : Կը մտածեմ թէ՛ ին-
չո՛ւ Աստուած չտեսներ մեր թշուառութիւնը , ին-
չո՛ւ չզկար մեր վրայ . . .

— Մօփի ընէ՛ , Լալիզար , ընդհատեց Պատրիկ՝ ա-
ւելի սեղմելով անոր զոգոցուն ձեռքերն իր հրա-
տապ ձեռքերուն մէջ : Մի՛ վխտիր . Աստուած՝ որ
կը տեսնէ մեր աննկարագրելի թշուառութիւնը , մեր
աղէտները , մեր արցունքներն ու մեր ստապանքը ,

չմոռնար միւղ . . . Կիտիլը՛ որ մեր սրտին ցայտած
արեան կաթիլն անգամ իր ձայնն ունի :

— Բայց . . . ընդհատեց Լալիզար զողզողով :

— Պէ՛տք է որ համբերութիւն ու անձնութեւն
թիւն ունենանք . . . յարեց Պատրիկ : Յիշէ՛ որ աղա-
տութիւնը քաղցր է այն մարդուն համար , որուն
չթիւնքները անձկութեամբ մը արտասանած էին
զայն . . .

Մանկամարդ աղջիկը մտիկ կընէր դեւցադունի մը
խօսքերուն , որոնք իր հոգեւոյն մէջ կը լեցուէին :

Աստուան դէմը , դե՛ս լուսոյ աստղը չձայած ,
Պատրիկ ըսաւ .

— Հիմակ պէ՛տք է որ մեկնինք , Լալիզար :

— Մեկնինք , շեշտեց մանկամարդ աղջիկը :

Ու երկուքն ալ վիթխարի ու բարձր սպառաժնի-
րու մէջէն դուրս ելնելով , ուղղակի ոստիարակ
դաշտի մը վրայ իջան եւ սկսան արագ արագ յառու-
նանալ . . .

Դաշտին ծայրը քրդարեակ գեւղ մը կար , որուն
միջանորն էր ճահվար պէկ : Պատրիկ , որ աղէկ կը
ճանչնար այդ վայրենաբարոյ քուրտերուն նկարա-
գիրը , խոհեմութիւն համարեց լեռներու մէջէն ճամ-
բորդել : Իրեն համար վտանգը մինչեւ Կուղա՛ս
կուղած ուրին կընծը համեմուտ ատենն էր . . . ան-
կէց անդին սպանով էր ամեն կերպով :

Այս մտածումով , Պատրիկ ուղղակի լեռնաշղթային
մէջ մտաւ Լալիզարին հետ : Թշուառ աղջիկը՝ զրկիէ
անգունդէ անգունդ զլորուող էակի մը պէս , խո-
րին լուռութեամբ մը կը հետեւէր իր հակայ դեւցա-
ղունին . . .

Գիշերուան թանձր խաւարը կամաց կամաց կը

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈՒՄԼԱ, 16 Փետրուար

Հինգշաբթի օր եկեղեցւոյ աւարտումէն յետոյ, Ազգ. վարժարանին մէջ տեղի ունեցաւ վարժարանի հանդէսը, երկսեռ խումբ բազմութեան մը ներկայութեամբ:

Արական եւ իգական վարժարաններու սաները իրենց ուսուցիչներով ամբողջ ներկայ էին, բայց մանկապարտիզներն իր փոքրիկներով կը բաժնակայէր. այս բանը տարօրինակ թուեցաւ բոլոր ներկայներուն եւ զայրոյթ պատճառեց շատերուն: Ի՞նչ կը նշանակէր թէ՛ ինք չը գալ եւ թէ՛ փոքրիկները զրկել աղջային նուիրական հանդէսէ մը: այսպէ՛ս պէտք էր յարգել մեր դիւցազուններու յիշատակը: Արտասանուած ոտանաւորները, ճառերը եւ երգերը ու մասնաւորապէս տնօրէն-ուսուցիչի, Տ. Ասլան Տօնիկեանի, պատշաճ ատենախօսութիւնը յուզիչ տպաւորութիւն մը թողուցին:

Երէկ գիշեր դարձեալ արական վարժարանի սրահին մէջ Տիկնանց խնամակալներն, ի նպատակ ունենալով իգական վարժարանի, պարահանդէս մը տուին: Ինչպէս կիսանախ, ներկայ եղողները բաւական զուարճացեր են եւ մինչեւ ժամը 2. 3 (Բ. Ե.), առանց որեւէ անպատեհ հուսկեան, պարեր, ցատկեր են. գալով հասոյթին տոմակներէն եւ պիւֆէէն, գումար ամենեւեւ, հազիւ 40—50 ֆրանքի զուտ չա՛ մը եղած է: Կրօնի թէ՛ այդ ալ բան մըն է, որ յովհաստե այստեղ պարահանդէսներ տրուած են, որոնց կազմակերպիչները շատ անպատճառ ըրած են. եւ թէ՛ այդպէս է, Տիկնանց խնամակալութիւնները ուրախանալու իրաւունք ունին:

Ռոսնեցի

ՀԱՆՏԱՆԱԿՈՒԹԻՒՆ Սիլիսիայի

Ս. Ծնունդի առթիւ Պատրիարքէն Սիլիսիայի Թաղ. Խորհրդոյ ղրկուած կոնդակի մը կողմէն համաձայն, «Մանուկ Յիսուսի նուէր» անունով Հայաստանի որբերուն ի նպատակ հետեւեալ հանգանակութիւնը կատարուած ու զրկուած է Պատրիարքարան:

Տիկնի Հաճի Զարիֆ Հաճի Մարթնեան 10 ֆր. Տիարք Համարաձուճաճի Սրբին 20, 30. Անանիկ Փափագեան 20. Հաճի Նշան Գարրիէլեան 20, 60 Մ. 4. Սեթեան 10, 30. Խաչիկ Ոստանիկեան 10. Պապիկ Ն. Ուզունեան 7. Գալուստ Ազաճեան 6. Աւետիս Խաչատրեան 5 50 Ալիքսան Միսիսեան 5. Յովակիմ Հալեան 6. Յ. եւ թ. Մարգարեան 5. Թադուր Խաչատրեան 6, 50. Միհրան Թէլէկրաֆեան 5. Յովհաննէս Փափագեան 5. Ոմն 5. Ոմն 5. Հաճի Կարապետ Թոփազաճեան 4. Գրիգոր Սիմոնեան 3. Յ. Սարգիսեան 3. Գրիգոր Տիրացեան 3. Կարապետ Հաճի Պողոսեան 3. Դաւաթու Յակոբեան 3. Սարգիս Մարգարեան 3. Ռուբէն Մեծիկեան 2. Յակոբ Վարդանեան 2. Միհրան Թոփաճեան 2. Մովսէս Թաթեճեան 2. Սիմէոն Պապաճեան 2. Մկրտիչ Օհանեան 2. Յակոբ Յարութեան 2. Հաճի Յակոբ Յարութեան 2. Հաճի Յակոբ Տրճերեան 2. Համարաձուճ Գարճեան 2. Ալիքսան Ս. Մէրտուհեան 2. Սարգիս Զարգարեան 2. Յարութիւն Սրուանձեան 2. Օհաննէս Սիմոնեան 2. Լիւն Ս. Թոփաճեան 1. Դասպար Երանոսեան 1. Ն. Իշխանեան 1. Սիրականի Տուճեան 1. Յովսէփ Հաճի Դաւարեան 1. Մկրտիչ Ստեփանեան 1. Օհաննէս Լալեան 1. Վ. Բեհեհեան 1. Ա. Շալճեան 1. Մարտիրոս Օհանեան 1. Օհաննէս Մեծիկեան 1. Դանիէլ Շառուկեան 1. Եղիա Համարաձուճեան 1. Սարգիս Արթիւրեան 1. Օհաննէս Նազարեթեան 1. Փիլիպոս Բապուճեան 50 սնդ. Յակոբ Ուզունեան 50 սնդ. Հաճի Կարապետ Համարաձուճեան 50 սնդ. Ոմն 1 ֆ. Ոմն 1. Ոմն 50 սնդ:

Գումար 212

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլիս Նարլը Գարուի եկեղեցւոյն ատենապետը, Զաքար Գրիգորեան անուն անձը, 3,000 ոսկիի արժէք ներկայացնող կտակ մը գրած է: Կտակեալ չէնքերն են. 4 քարուկի տուն՝ Նարլը Գարու, 1 փայտաշէն տուն ու 1 արսա: Ասոնց տարեկան հասոյթը պիտի բաժնուի 16 մասի եւ պիտի տրուի հետեւեալ կերպով. 6 բաժինը Ազգ. Հիւանդանոցի, 2ը Երուսաղէմի, 1ը Գալիլեան որբանոցին, 1ը Սամաթիոյ աղքատներուն, 1ը Պալաթի աղքատներուն, 1ը Էյուպի աղքատներուն, 1ը Գաւըմ փաշայի աղքատներուն, 3ը պիտի յատկացուի ամէն տարի հոգեհանգստեան պատարագի մը, որ հանգուցեալին հոգւոյն՝ Հիւանդանոցի մատուակին մէջ պիտի կատարուի:

Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը կտակակատար կարգուած է:

— Յօքշանէ Պատրիարքարան ուղարկուած տեղեկագիր մը մանրամասնօրէն տեղեկութիւն կուտայ նման չունենաւ զայն աղկալան արարքի մը վրայ: Թրկաօգնայի Տ. Ղեւոնդ քահանայի մէջ աղգակար (Մելքոն Ասլանեան) վախճանած ըլլալով, յիշեալ քահանան թաղեան համար Յօքշան կերթայ: Հոգաբարձութիւնը իրմէ իբր ծախք 100 ֆրանք կը պահանջէ. այն առեւ Տ. Ղեւոնդ քահանայ, առանց երբէք հայ եկեղեցականի իր հանգամանքէն քաշուելու, տեղւոյն Ռուսիոյ եկեղեցականութեան կը դիմէ ու հայ նշնիցիալը թաղել կուտայ: Պոլսոյ Կրօն. Ժողովը, կրօնի, այս քահանան կարգարթ պիտի քնէ:

— Ժամանակին, Ի. չպէս ծանուցիւք, Ա. Կերիւայի քեհնոսները տեղւոյն հայ Առաջնորդ՝ Սարաճեան եպիսկոպոսի միջոցաւ, Ս. Կաթողիկ սին դիմում րրեր էին, որպէս զի իրենց քահանայացուները հայ եկեղեցւոյ մէջ ձեռնադրուէին: Իսկ Ս. Կաթողիկոսը, արտօնելով Սարաճեան Սրբազանը որ Հեհնոսի քահանայացուները ձեռնադրէ, փափօք յայտնած էր անոնց դաւանութեան վրայ լրացուցիչ տեղեկութիւններ ստանալ: Հեհնոսները իբր մէկ ամիս առաջ ժողով գումարելով, որոշեցին Ս. Հայրապետին պահանջներուն պատասխանել, ու հանրադրութիւն մը ուղարկած են Սարաճեան Սրբազանի, ստորագրուած Հեհնոսի բոլոր եկեղեցականներու կողմէ: Այդ հանրադրութեամբ կը խոստանան. 1) Էջմիածնի Կաթողիկոսը իբր իրենց եկեղեցիին հոգեւոր պետ ճանչալ. 2) իրենց եպիսկոպոսական ձեռնադրութիւնները Էջմիածնի Կաթողիկոսներուն կատարել տալ. 3) իրենց եկեղեցական առանձին կազմակերպութիւնը պահելով հանգրձ, կրօնական խնդիրներու մէջ կ'սթողիկոսներու իրաւասութեան ներքեւ մնալ: Սարաճեան Սրբազան այս հանրադրութիւնը Էջմիածնի ղրկած է:

— Բրոֆէսոր Թումանեանի կողմէ Բարիկ տարուած հայ որբերու առթիւ, ինչպէս յայտնի է. ֆանսակոն դատարաններու դիմում եղած էր. դատարանը վճռած է որ 18 որբերէն 9ը միայն Տ. Լ. Գրա. եանի տրամադրութեան տակ պիտի մնան, որովհետեւ միւս 9ը տղաքը իրենց ծնողներուն կողմէ յանձնուած են Պատ. Թումանեանի, որ զանոնք Լոնտոն տարած է:

— Ստեփանք Բուսահայ լեզուով

ձարձրուէր, ինչպէ՛ս մեռչ մը: Լուսոյ աստղը արեւելեան հորիզոնին վրայ կը նայէր:

— Բան մը չմտա մինչեւ կիրճը, Լալիզար, միմիայն Պատրիկ անունը գործածելով մը: Ահա՛ լոյսը կը ձեղքուի... ու մենք ալ ամենէն ասպանով տեղը կը հասնինք: Այս սարին ետեւը հայաբնակ գիւղ մը կայ... այնտե՛ղ ժամը մը չափ կընանք հանգիստ ըլլալ:

- Հայաբնակ գիւղ... բացառապէ՛ս Լալիզար:
- Այո՛, կրկնեց Պատրիկ:
- Կրնա՞նք վտանգիլ:
- Հոն քուրդ չկայ... կրնանք վտանգիլ:
- Դուռն գիտես... միմիայն մանկամարդ աղջիկը:

Բայց խօսքը վերջացուցած չէր, ահա՛ ոտնաձայն մը լսուեցաւ:

— Կնիքը Լալիզար, կարծեմ թէ ոտնաձայն մը կը լսուի զիմացի սպառաժնեքու մէջէն, նկատել տուաւ Պատրիկ:

Ու խորին ուշադրութեամբ մը նայուածք մը հանդիպակաց բլուրներուն եւ բարձր ժայռերու կողմը դարձուց:

Լոյսը բոլորովին բացուած էր: Կապոյտ ու անամպ երկինքը կը լեցուէր հորիզոնի մը ետեւէն վեր բարձրացող հրապառ դուռնին ճառագայթներով:

Պատրիկ ժայռերու ամենէն ասպանով տեղը թողուց յանկամարդ աղջիկն ու ինքը քանի մը քայլ յառաջանալով, ակնից դրաւ ոտնաձայններուն:

Ան առան նշմարեց որ խումբ մը զինուած քուրտեր գէպի ետ կեցած սպառաժնեք կը բարձրանային,

ամեն կողմ ու շարժւումներ քննելով:

Հասկցաւ թէ պաշարուած էր... Ի՞նչ ընէր... Երբ կիրճը մտնելու ըլլար, մեծ դժուարութիւն պիտի քաշէր յառաջանալու: Ուստի արագ արագ Լալիզարին գտնուած ապաստանին եկաւ եւ ամեն բան յայտնեց:

— Դուռն չուսով սա գիտացի քարերուն մօտը, Լալիզար, պատուիրեց Պատրիկ անունին ձայնով մը:

- Ամենեւին... չեղանք Լալիզար:
- Կը պաղատիմ... կրկնեց Պատրիկ:
- Ի՞նչու համար կը պաղատիմ... միմիայն կուզես միմիայն կուզիլ... Ուրեմն ի՞նչ բանի պիտի ծառայէ սա վեց հարուածը...:

Ոտնաձայնները կը մօտենային... Պատրիկ փուռ տեղ կարգաչէր որ Լալիզար կուռնի մանակից չըլլար:

Վայրկեան մը մտածեց... չորս դին նայեցաւ... քուրտերը քննեց... տեսաւ որ հոն մանկուկ երկուքն ալ պիտի վտանգուէին:

Այս վարանոտ դերքին մէջ էր, երբ ձայն մը լսեց. այդ ձայնը խորտաւար կը գոչէր:

— Անձնատուր եղէք...:

Պատրիկ կուրծքէն հանեց վեց հարուածը եւ առանց ժամանակ կորսնցունելու, երկու անգամ պարպեց զայն:

Վեց-հարուածին ձայնը սարսափով մը լեցուց քուրտերն, որոնք ապաստաններէն վար թափուեցան վայրի գազաններուն պէս: Բայց քառորդ մը չանցած ակազին բազմութեամբ մը բոլոր լեռը բռնեցին ու պաշարումի մը տակ գրին երկու անձնուէրները:

— Կը պաղատիմ, Լալիզար, դեռ ժամանակ կայ, միմիայն Պատրիկ զոգրուելով. հեռացի՛ր ասկից... բարձրացի՛ր դէպի սարը... անոր ետին հայ գիւղը կայ... կրնաս ազատիլ... ես բաւական առեւ պիտի դիմադրեմ... եթէ Աստուած յաջողութիւն տայ, մուկը կ'ոսկրուի պէս ալ աղատ պիտի ըլլամ...:

— Երբէ՛ք... կրկնեց մանկամարդ աղջիկը՝ մոլոր աչքերը դէպի քուրտերուն կողմը դարձնելով: Գիտցի՛ր որ քայլ մը չեմ հեռանալ ասկից, քանի իմ մէջքս ալ վեց-հարուած մը կախուած է, քանի որ դէմս իմ ոտներմ թշնամբս կը տեսնեմ...: Այո՛, պաշարուած ենք... մեր կեանքը վտանգի մը տակ է... Պիտի կուռնեք... պիտի մեռնինք... ուրեմն միմիայն... ահա իմ վերջին խօսքս:

Պատրիկ տեսնելով որ Լալիզար անդրուելի կը մնար իր կամքին մէջ եւ վերահաս վտանգին հանդէպ՝ անմիան արիւթիւն մը ցոյց կուտար, ստիպուեցաւ համակերպիլ:

— Ուրեմն կանչե՛ք Աստուած... թոթովեց Պատրիկ՝ մանկամարդ աղջկան ձեռքը բռնելով:

— Այո՛, կանչե՛ք Աստուած... կրկնեց Լալիզար: Երկու անձնուէրացիները ժայռի մը ետին կեցան ու յարմար դիրք մը բռնեցին:

Կէս գիշերուան մօտ էր:

Քուրտերը հեռուէն ապաստաններու վրայ կը լեցուէին: Յանկարծ հրացանի մը որոտումը նշան տուաւ յարձակումի մը:

(Շարունակելի)

Հնչանկ Ժը, որ տխուր տպաւորութիւն Ժը թողուց մեր վրայ, Միացեալ Հնչակեան կուսակցութեան կեդրոնի անդամներուն միջեւ ժա. մանակէ Ժը ի վեր լսուած պառակ. տուած պաշտօնապէս հաստատե. լով:

Այս Ռուսահայ Հնչակը՝ որ «հին Հնչակեան»ներու օւկանը ըլլալ կը թուի, վերակազմակերպեալ այժմ գործի վրայ գտնուող կարգ Ժը անձերու կուսակցութեան արտաք. տուած ըլլալը կը յայտարարէ, խել Ժը ամբաստանութիւններ ընելով. բայց ըստածները հաստատող ունէ գրական փաստ առանց ներկայա. ցնելու առայժմ գոնէ:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սթանպօլըն Պէյօղլու ճիւղէն. տէ կէշէն հափթա պիր թագըմ խըրսըզլար պիր խանէյէ կիրմէ. լէրինտէ՝ ժանտարմա վէ ասքէր թարաֆընտան իհաթէ օլընուպ, վուրուշմուշ վէ թարաֆէնտէն պիր գաշը եարէլէնմիշ իտի: Ճիւղար. տաքի էհալի թապիի խէֆ ու՝ տէհ. չէթտէն նէ օլտըղըն պիլէմէյուպ, շու ասի խըրսըզլար գամիթէճի. լիկ ընէկի վէրմիշ վէ պու կիպիտէ էվրօբա կազէթալարընա իխպար օլընմըշ ըտը: Իշին ասլը իսէ ար. նափուտ, թիւրք վէ բոււմ էֆրա. տընտան միւթէշէքիլ պիր խըր. սըզ գոււմառնաւընըն եագայը էլէ վէրմէսինտէն իպարէթ տէյօրլար:

— Կէշէն հափթա պազը ճէրի. տէլէր «Միթթօփիցատա բուս գօն. սօյսընը վուրմուշար» եագտըլար ըտը: պու հափաթիսի ասլ ու է. սալը ասլա օլմատըղըն Սթանպօլ. տան պիլտիրիօրլար:

— Սթիւպ վալիսինին Սթանպօլ հիւքիւմէթինէ պիլտիրտիկինէ պի. նաէն, Բանչօֆ գազաւընտա 60 քիշիլք պիր պուկար չէթէսի վէ թիւրք ասքէրլէրի պէյնինտէ չէ. տիտ միւսատէմէ վուգու պուլ. մուշ, պուկարլարտան 12սի վէ ասքէրլէրտէն 2սի էօլմիւշ: Պուլ կարլար պուկար ասքէրի ֆօրմա. սընտա ըմըշար, էօլէնլէրին պիրի միրալայ վէ պէշի գապիթ էլպի. սէսի իլէ տիւշմիւշէր:

— Ա. Բէյքըրըն Սէլանիքտէն իխպարը իւզրէ, Սէրէվէ եագըն Պրօնտօ նամ քէօյտէ ասքէրլէր վէ էհալի պէյնինտէ չէտիտ պիր մու. հարէպէ վուգու պուլմուշ տըր:

— Պու սօն տէֆա գապուլ օլը նան իսլահաթ ճէտփէլինին պազը էհէմմիյէթի նագթալարը Պապը Ալի բէսմէն Սէլանիք, Մանաս. թըր վէ Սթիւպ վալիլէրինէ պիլ. տիրմիշ վէ ումուս միւֆէթիշ Հիւմի բաշանըն մէմուրիյէթի իւշ սէնէ տէվամ իտէճէկինի անլաթմըշ տըր:

Իշպու հափաթիսի վէրէն թէ. լէկրաֆնամէնին. պէյանը իւզրէ, մէքըիւր իսլահաթը ումուս բու. մէլի վիլայէթլէրինտէ իճրա իթ. մէք իշին Սուլթանըն արգու իթ. տիկի սէօլլէնիւր իմիշ. ֆագաթ պու պապտէ էլիլէրէ տահա հիշ պիր թէպիլգաթ օլընմամըշ:

— Սթանպօլտան Պուրկազ թա. րիգի իլէ պիլտիրիլտիկինէ պինա. էն, Մանասթըր վիլայէթինտէ իզպիշտա նամ մահէլտէ Բէզնա խրիսթիանլարը վէ պիր գաշ թա. պուր թիւրք ասքէրլէրի պէյնին. տէ գանլը պիր միւսատէմէ վուգու պուլմուշ տըր:

Սաթ իքիտէ խրիսթիանլար թէհիլքէլի պիր վագիլէթ տէ պու. լընըլար ըտը, ֆագաթ գարսն. լըզ պասմասընտա, գամիթալար հէր թարաֆտան եէթիլէրէք, աս. քէրլէրի գափկայը թէրք իթմէկէ մէճպուր իթտիլէր: Իքի թա. րաֆտան օթուզ քիշիտէն զիյատէ էօլտիլէր: օ գատար տախի եա. ըլիլ օլմալտըր: Թիւրքլէր կէրի չէքիլմէլէրինտէ, եօլարը իւզէ. րինտէ լասթ կէլէն խրիսթիան չիֆթիլքլէրի վէ խանէլէրի եագ. մըշար:

— Էճնէպի հիւքիւմտարլարա տօսթլըզ պէրկիւզարը օլմագ վէ եախօտ ֆէվզէլտտէ տիրայէթտէն տօլայը իհտա օլընմագ իւզրէ՝ Սուլ. թան «Էրթուղընու» նամընտա եէնի պիր նիշան իհտա իթմիշ տիր:

— Եէնի իսլահաթ իշին Աւ. տըրիա վէ Բուս էլիլէրին Պապը Ալիէ վէրմիշ օլտըզլարը պէյան. նամէտէ Մաքէթնիլալը մուհա. ճիւլէրին վաթանլարընա ափտէ. թինէ միւսատէ վէ բօլիթիգա միւթէհիմլէրինէ ափը ումուսի իլան օլընմասընըն իզթիլգաւը տախի կէօսթէրիլմիշ օլուպ, Սուլ. թան պու շարթալը տսխի պիլա իթիւրազ գապուլ իթմիշ տիր:

ԻՆԿԻԼԻԹԷՐԱ

Ինկիլիզ միւսթէմէլգաթ նագը. րը Մ. Չէմպըրլէն իւմիտ պուր. նընտան (Գաբ) Նօրման վաքըրնա րագիպ օլուպ Լօնտրայա կիթմէք. տէ տիր: Մալիւս օլտըղը իւզրէ, Մ. Չէմպըրլէն իւշ այտան պէրու Աֆրիգա միւսթէմէլգաթընը վէ պախաւուս թրանսվալ վէ Օրանս էյալէթլէրինի կէզմէքտէ իտի. նագըր պու սէյահաթը իլէ Պօթ. լէրին վէ Աֆրիգանտէլլէրին թէ. վէտնուհընը քէնտիսինէ ճէպ իթ. մէք իսթէտի: Մահիհէն չօգ եէր. լէրտէ էհալի անը ֆէվզէլտտէ իզ. րամ վէ թագիլմէ գապուլ իթտի վէ պիր գաշ մահէլտէ Պօթլէր անըն արապասընըն աթլարընը չէ. զուպ քէնտիլէրի չէքթիլէր: Պու թալթիֆ ու թագիլմէ մուգապ'լ Մ. Չէմպըրլէն տախի իլէրիսի ի. չին էնվայի վատարտա պուլըն. տը իսէտէ, պազը թարաֆլարտա էհալի մահգէլլէրլէ՝ սուլհ հանա.

մէսինին ահքեամընըն իճրասընը թալէպ իթտի. եանի մուհարէպէ էսնասընտա թուլթուլպ սիւրկիւն օլընմըշ օլան պիր թագըմ պօթ. րուէսասընըն սէրպէսթ պըրագըլ. մալարընը, վէ Գաբտա ըսեանա գալգըշուպտէ Պօթլլէրէ մուսվէ. նէթ իտէն Աֆրիգանտէլլէրէ ափը ումուսի իլան օլընմասընը իտտա իթտիլէր:

Պու թալէպլէր նագըրա խօշ կէօրիւնմէտի վէ իլէրիսի իշին պուլուտլար հըսս իթտի:

— Լօնտրատա էճնէպի մուհաճիլլէ. րին ֆէվզէլտտէ սարէթտէ արթ. մագտա օլտըղը Ինմիլիզ հիւքիւ. մէթինի տիւշիւնտիւրիօր: 1901տէ 70,000 վէ 1902տէ 81,000 մու. հաճիւր թօրլանմըշ տըր: Լօնտրա. տա թէքմիլ պիր գաշ մահէլլէր իթալիալը, եհուտի, բուս վէ ալ. ման մուհաճիլլէրլէ տօլմուշ օլուպ. հալլէրի «Գրք երանելի»ին հա. լինտէն տահա ֆագիւր իմիշ: Պու եօլտա մուհաճիլլէրլէն թօրլանմա. սընա գարըն պիր գանուն թան. զիմ իթմէք իշին Բարլըման սիւ. զէքէրէտէ պուլընըյօր, պու պապ. տէ պիր գօմիսիօն թէշքիլ օլընա. ճագ:

Յ Բ Ա Ն Ս Ա

Խարիճիէ նագըրը Մ. Տէլքասէ մէճիւսի վիւքէլտա Մաքէթնիա իշլէրինտէն տօլայը եէնի պիր Սա. րը բէսալէ հագըրլամագտա օլտը. զընը պէյան իթմիշ տիր:

ՍԵՐՊԻԱ

Պէկրատտա նէշր օլընան թըր. կոպիքի կըաւ նամ սըրպ կազէ. թաւը տէյօր «Սըրպլար Պալգան. տա սրաքոշ-քօյի գապուլ իտէմէլ. լէր, զիրա օնուլէ էսկի-Սերպիա. տա վէ Մաքէթնիատա պիլգիմ գարտաշարըմըզ մահզ օլուրլար: Էկէր Բուսիա քէնտի օրթօտօքս գարտաշարընա ճիտտէն մուսվէ. նէթ իթմէք իսթէր իսէ, լա. զըմ ճէպրի թէտպիլլէր էլէ ալըն միւքէմմէլ իսլահաթ իճրա իթտի. մէք իշին:»

Ի Թ Ա Լ Ի Ա

Ալպանիատա իմամլար վէ հօճա. լար ճամիլէրտէ արնափուտարը խրիսթիանլարա գարըն հիտտէթ. լէնտիրմէքտէ վէ ճէհատա (սուրք պատերազմ) թէշվիգ իթմէքտէ օլտըզլարընտան տօլայը, Սթան. պօլտաքի իթալիա էլիսի Պապը Ալիէ միւրաճաթլէ մէքըիւր թէշ. վիգճի իմամ վէ հօճալարըն ճէգա. լանմասընը թալէպ իթմիշ տիր:

— Մէճիւսի մէպուսանտա պիր մէպուսըն սիւվալը իւզէրինէ խա. րիճիէ միւսթէշարը Մ. Պասէլի ճէվապէն՝ «Իթալիա հիւքիւմէթի շու սըրա պիր Եէշիլ Բիսալէ նէշր իթմէք միւնասիպէթսիզ կէօրիւ. յօր» տէտի:

Պիր մէսէլտէն տօլայը տէօվ. լէթլէր վէ էլիլէր պէյնինտէ միւ.

պատէլէ օլընան բէսմի էվրագլարը թապ իտուպտէ բէսալէ (տետրակ) չէքլինտէ մէպուսլարա տաղըթմագ միւթէմէտին տէօվլէթլէր պէյնին. տէ գաիտէ օլմուշ տըր: Իշթէ ին. կիլթէրանըն պու բէսալէսի «Մա. վի բէսալէ» Պրանսանըն «Սարը բէսալէ» վէ իթալիանըն «Եէշիլ բէսալէ» թապիր օլընըլար:

ՄԷՍԷԼԷ 2ԱԹԱԼԼԱՆԸՅՕՐ

Խարիճիէ նագըրը թէվֆիգ բա. շատան սօնրա, սատրապմա տախի իսլահաթըն իճրա օլընաճաղընը էլիլէրէ շիֆահէն սէօլլէմիշ վէ քէզա Մաքէթնիանըն իւշ վի. լայէթինտէն մաատա Ալպանիատա վէ էտիրնէ վիլայէթինտէ այնը իսլահաթը իճրա իթմէք իշին Սուլթանըն արգուսընը պէյան էյ. լէմիշ իսէտէ, մէճիւսի վիւքէլտա պազըլարը մէքըիւր իսլահաթ ճէտ. վէլին պազը պէնտլէրինի գապուլ իթմէմէք իշին իթիւրազաթտա պուլընմըշ օլտըզլարընը ֆագաթ Սուլթան ճէտփէլի թէմամէն գա. պուլ իթմէք իսթէտիկինի Սթան. պօլտան պիլտիրիօրլար:

Վէ լաքին, թանըն վիլէնա մուսպիրի շու եօլտա մալիւմաթ վէրիօր. «Կէօրիւնիւշէ պինաէն, էլիլէրին իտտաասը իւզրէ իսլա. հաթը Սուլթան գապուլ իթտի տէնիլմէսի խիւթընա օլարագ, էսկի թիւրքլէր վէ Սուլթանըն իքինճի սէր քեաթիպի իզգէթ բաշա ճէտփէլին թէտըզընը միւ. նասիպ պիր վագըթա թէէսիւր իթմէք իշին իճրա թէէսիւր իտէ. յօրլար: Գէզա շայէթա կէօրէ էսկի թիւրքլէր մուգատտէմա էր. մէնիտանտա ֆիւրտլէրէ եարտըր. տըլարը կիպի, Մաքէթնիատա տախի Արնափուտարա խրիսթի. անլար իւգէրինէ հիւճմ իթտիրմէք նիլէթինտէ պուլընըլար ըմըշ:»

Տիկէր թարաֆտան Եուլանիս. տանտա Բուլար չէթէլէր թէշքիլ իտուպ, թէսալիատան վէ Եփի. րոստան Մաքէթնիայա վէ Ալ. պանիայա կիտէրէք, Օրթօտօքս արնափուտարը վէ բուլարը իս. թիլայա գալտըրմագ թէշպպիւ. սինտէ պուլընտըզլարը Ալթինա. տան պիլտիրիօր: Պուլլարըն մագսէտի Ալպանիատա օթօնօմի ի. տարէսի թէսիս իթտիրմէքտէն ի. պարէթ տիր:

ՊԻՐ ՍՅՎԷԻՅԱԹ

Պուլտան էվլէլէրի նօմէրօրըն «Տախիլիէ» գըմընտա, Ֆիլիպէտէ վագը օլան իճթիմատա իրատ օլը. նան նութգլարըն մաալընտան պահս օլընտըղը սըրատա «գօմիթլէրէ գար. չը պուկար հիւքիւմէթին էլէ ալտը. զը թէտպիլլէրէ գարըն չէտալէն բրօ. թէսթ օլընտը» եագըլաճագ իքէն, միւրէթթիլլէր սէնվէն պիր սաթըրը ունուտուպ «գօմիթլէրէ գարըն չէտի. տէն բրթթէսթ օլընտը» եագըլըլար ըտը:

Ожогорникъ Н. Драгулевъ
Меч. на Хр. Н. Войниковъ—Варна